ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊՆ ԻՐ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆ Է ՀԱՅՏՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմից հատուկ գրություն էր առաքվել քույր Եկեղեցիների հովվապետերին՝ կապված Երուսաղեմի հայոց Պատրիարքությանը պատկանող «Պարոն Տեր» կալվածքի շուրջ ծագած խնդիրներին:

Ի պատասխան Նորին Սրբության նամակի, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ստացվել է Հռոմի Սրբազան Քահանայապետ Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապի նամակը:

Կաթոլիկ Եկեղեցու հոգևոր պետն իր մտահոգությունն է հայտնել Վեհափառ Հայրապետին՝ տեղեկացնելով, որ հանձնարարական է տրվել Վատիկանի արտաքին գործոց գրասենյակին՝ դիմելու Իսրայելի կառավարությանը՝ «Պարոն Տեր» կալվածքի շուրջ ծագած խնդրի արդարացի լուծման համար:

«Հուսով եմ, որ բարի կամքի և փոխադարձ հարգանքի ոգով հնարավոր է այս ցավալի իրավիճակից լուծում գտնել, որով կպահպանվի Երուսաղեմի հնագույն հայոց Պատրիարքությունը և այսպիսով կկանխվի ևս մեկ հարված՝ ուղղված քրիստոնեության առկայությանը Ս. քաղաքում», - նշել է Հովհաննես-Պողոս Բ Պապն իր նամակում:

4 սեպտեմբերի 2002 թ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ